

ՀԱՅ ՄԵԾ ԱՐՁԱԿԱԳԻՐ-ԵՐԳԻԾԱԲԱՆԸ


(Երվանդ Օտյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Ս. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայ դասական գրականության մեջ խոր հետք է թողել Երվանդ Օտյանը՝ ռեալիստական համար ծնված մեծագույն հայ երգիծաբանը¹։ Տակավին հարուստ չէր նրա գրական վաստակը, տակավին նոր պիտի հզոր թափով հնչեր նրա երգիծական ձայնը, երբ 1900 թ. մամուլն արձանագրեց, թե նա արդեն դրսևորել է «փայլուն հեգնության և սուր ու ոգելից երգիծանքի գերազանց հատկությունները, որոնք արդի հայ մատենագրության այդ ճյուղին մեջ առաջին տեղը դրվել տված են իրեն աներկբա»²։ Այդ ժամանակ մեր երգիծաբանության հսկա Հակոբ Պարոնյանի թափուր գահին բազմելու հավակնորդներ չէին պակասում։ Սակայն Ե. Օտյանը միակ երգիծաբանն էր, որ կոչված էր փոխարինելու ծաղրի, ծիծաղի, սրամտության անզուգական վարպետին և ըստ արժանվույն կրելու «Պարոնյանի հաջորդը»³ բարձր կոչումը։

* * *

Երվանդ Օտյանը ծնվել է 1869 թ. սեպտեմբերի 19-ին, Կ. Պոլսում, համբավվոր հայ մտավորականների մեծ գերդաստանում։ Նրա մանկության առաջին յոթ տարին անցել է բարեկիրթ և գրասեր ծնողների հոգատար հարկի տակ։ Հայրը՝ Խաչիկը⁴, պետական պաշտոնյա էր, զբաղվում էր նաև գրականությամբ ու թարգմանությամբ։ Ֆրանսերենից, մասնավորաբար Վ. Հյուգոյից, թարգմանություններ էր կատարում նաև մայրը՝ Մաքրուհին։ Յոթնամյա Եր-



1 Ա. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, Երևան, 1961, հատ. 8, էջ 524։

2 Տե՛ս «Նոր կյանք», Լոնդոն, 1900, № 6, էջ 96։

3 Տե՛ս «Անահիտ», Փարիզ, 1901, № 12, էջ 295։

4 Խաչիկ Պողոսի Օտյանը (1842—1908), ժամանակակիցների վկայությամբ, «բարի և համբույր մարդ մը, որ կատարյալ առաքինություն մըն էր» և ուներ «ատաքնահարգար անտարբերության ներքև» թաքնված «ռամկասեր հոգի» (տե՛ս «Արևելք», Կ. Պոլիս, 1908, հոկտեմբերի 4)։ 1860 թ., Փարիզում ուսանելիս, բախտ է ունեցել ծանոթանալու, թերևս համագործակցելու նույն թվականին Փարիզ ժամանած բոցաշունչ հեղափոխական-դեմոկրատ Միք. Նալբանդյանի հետ։ Ու նրան էլ ձևավորվել է մեծ մտածողի գրաքննադատական գլուխ-գործոցը՝ «Կրիտիկա Սոս և Վարդիթերի», հետևյալ մտերմիկ ընծայականով. «Սիրական եղբոր, Խ. Պ. Օտ-ին, նվեր»։

վանդի խնամքն ու կրթությունն, այնուհետև, ստանձնել է հորեղբայրը՝ ազգային, պետական և գրական ականավոր գործիչ Գրիգոր Օտյանը, որի «տունը կեդրոն մըն էր, ուր կհավաքվեին բոլոր գրասերներն ու գրագետները»⁵։ Սկզբում աշակերտելով հորաքրոջը՝ անվանի մանկավարժ և թարգմանիչ Եվփիմե Օտյանին, Երվանդը հետո շուրջ տարիուկես սովորել է Պերպերյան նշանավոր վարժարանում, ապա նորից ուսումը շարունակել ընտանիքում՝ հրավիրված հմուտ ուսուցիչների ղեկավարությամբ։ Փոքր հասակից հափշտակված ունկրողրել է մյուս հորաքրոջ՝ Իսկուհի Օտյան-Ծրկանյանի ժողովրդական հեքիաթներն ու զրույցները։ Դեռևս պատանի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով կլանված կարդացել է ընտանեկան ճոխ գրադարանի հարյուրավոր գրքերը. «Օր կըլլար,— գրված է նրա հուշերում,— որ ամբողջ խոշոր հատոր մը կլափեի» (հատ. 4, էջ 13)։ Մանկական ամենատպալուրիղ տարիքում նրան բախտ է ընկնում շրջագայելու Փարիզում, Վիշիում, Նիսում, Հռոմում, Նեապոլում, Անտիոքում, Ռոմինիայում և այլուր, դիտելու թանգարաններ, պատկերասրահներ, ցուցահանդեսներ, պատմական հուշարձաններ։ Օտյանների ընտանեկան մթնոլորտը, ինչպես ասում են, շնչում էր գրականությամբ։ Ընտանիքում դեռ թարմ էր 1860 թ. Կ. Պոլիս այցելած և Օտյան հարկի տակ հյուրընկալված Միք. Նալբանդյանի պայծառ հիշատակը, նրա «ազնիվ ոգին և բոցաշունչ ազատասիրությունը»⁶։ Այնտեղ ընդհանուր սեր ու ակնածանք կար դեպի գիտությունը, արվեստը, մշակույթը, բոլոր ժամանակների ու ժողովուրդների գրական մեծերը, իսկ «Վիքթոր Հյուգո,— գրել է Ե. Օտյանը,— մեր տան ընտանի թերափն էր (կուռքը—Ս. Մ.) և ամենուս վրա իր ազդեցությունը գործած է» (հատ. 4, էջ 12)։ Բնական է, որ նման պայմաններում Ե. Օտյանը նույնպես պիտի համակվեր մտավոր աշխատանքով։ Ծիշտ է նկատված, թե «անիկա միանգամայն եղած է ուսումնասիրող մը, բանասեր մը, մանավանդ իր երիտասարդ օրերուն»⁷, իսկ «գեղարվեստական գրականության վերաբերմամբ նրա պաշարն անսպառ էր»⁸։ Պատահական չէ, որ նա իր ստեղծագործական առաջին քայլերն սկսեց պատմա-աշխարհագրական մի շարք ուշագրավ հետազոտություններով՝ Անտիոքի, Իշխանաց կղզիների, հին հունական նշանավոր կին գործիչ Ասպազիայի, հուշակավոր Կլեոպատրայի, հունաց հայազն թագուհի Թեոդորայի մասին։ Դրանց հետևեցին պատմա-բանասիրական ու գրադատական բազում հոդվածներ, որոնց մեջ տեսնում ենք սկսնակ Օտյանի խոր գիտելիքները, բարձր ճաշակը, գրական հասուն հայացքները⁹։ Դեռևս ևրիտասարդ հասակում նա մանրամասն ուսումնասիրել էր ոչ միայն հայոց, այլև արևելյան և արևմտաեվրոպական մի շարք ժողովուրդների հոգևոր ու մտավոր մշակույթը, մասնավորաբար՝ հին ու նոր պատմությունը, բանահյուսությունը, իմաստասիրությունը, կրոնը, արվեստը, մատենագրությունը։

⁵ Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու (վեց հատորով), Երևան, հատ. 4, էջ 12 (այնուհետև սույն հրատարակության հատորները, մեջբերման համապատասխան էջերով, նշվելու են բուն շարագրանքի մեջ)։

⁶ Ա. Ինճիկյան, Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1954, էջ 325։

⁷ Տե՛ս «Արև», Կահիրե, 1926, հոկտեմբերի 5։

⁸ Ա. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 8, էջ 529։

⁹ Այս հարցի և առհասարակ Ե. Օտյանի կյանքի ու գործի մասին տե՛ս Ա. Մակարյան, Երվանդ Օտյան, Երևան, 1965։

Այսպիսով, Երվանդ Օտյանը զինված էր հարուստ գիտելիքներով, ուներ կյանքի լուրջ ճանաչողություն, հասուն միտք և բավականին փորձված գրիչ, երբ սկսեց հանդես գալ հանրածանոթ «ութսունականների» ճանաչված պարագլուխ Ա. Արփիարյանի «Հայրենիք» օրաթերթում (1891—1896), որի խմբագրական կազմի ամենագործունյա անդամներից էր ինքը:

«Հայրենիքի» սյուններից մեկը՝ Լ. Բաշալյանը, գրել է. «Խանդավառության և հավատքի օրեր էին՝ տիրող սարսափին տակ հազիվհազ զսպված և որևէ գնով արտահայտվելու հետամուտ: Նոր վերածնության հիանալի շրջան, որուն նեցուկն էր մեր թերթը»¹⁰: Հիրավի, «ութսունականների» «Արևելք» և «Մասիս» օրգաններից հետո «Հայրենիքն» էր, որ մեծապես նպաստեց ռեալիստական այն գրականության զարգացմանը, որը կոչված էր արտացոլելու «կոպիտ իրականությունը», նյութ քաղելու ժողովրդի կյանքից և ծառայելու ժողովրդի կյանքին, սնունդ տալու մարդկանց սրտին ու մտքին: Այդ պատճառով էլ այն դարձավ ժամանակի ամենաժողովրդական պարբերականը, «մեծարժեք օրգան մը, ամենեն նորոգիչ, ամենեն բեղմնավոր թերթը, զոր արևմտահայերը ունեցած ըլլային մինչ այն ատեն»¹¹: Հենց այս գործում էլ ահա մեծ բաժին ուներ Ե. Օտյանը:

Ամենից առաջ նշենք, որ Ա. Արփիարյանի, Գր. Զոհրապի, Լ. Բաշալյանի, Տ. Կամսարականի, Ա. Զոպանյանի, Երուխանի և մյուսների նման Ե. Օտյանը ևս մերժում էր «հին դպրոցի ներկայացուցիչներու» (հատ. 4, էջ 14), այսինքն՝ Գր. Օտյանի, Խ. Պերպերյանի, Կ. Գարադաշի և մյուսների պաշտպանած վերացական երազանքների, կյանքից հեռու տանող ու «մխիթարող», ինչպես ինքն է գրել՝ «օճառե գնդակներու պես գունագեղ, այլ մեջը պարապ, ճոռոմ դրությունները», որոնցում «պատմությունը հեքիաթի կերպարանք կառնե»¹²: Նրա համոզմամբ՝ ժամանակի հոգսերով ծանրաբեռնված սերնդին վնասից բացի ոչինչ չէին կարող տալ «համ ու հոտ չունեցող» այն «վեպերը» կամ չափատողերը, որոնք «կարդացած ատենդ կարծես մեկը փայտ մը առեր գլուխդ կղարնե»¹³: Նա ևս պաշտպանում էր բովանդակալից, բարձրարվեստ ռեալիստական գրականության դատը: «Պատմական, իմաստասիրական, ընկերական ու գիտական այնչափ հարցեր կճոխացնե եվրոպական գրականությունը, — գրել է նա մի հոդվածում, — ինչո՞ւ մենք ալ այդ նյութը չմտցնենք մեր գրական շրջանին մեջ»¹⁴: Պայմանով, իհարկե, որ նյութը բացահայտվի ճշմարիտ արվեստով և զաղափարական առաջավոր դիրքերից, ինչպես արել է, օրինակ, «Ռուսիո ժամանակակից մեծ գրագետ» Լև Տոլստոյը, որն «ամեն վիճակներուն մեջ միշտ պզտիկներու փաստաբանը և անխոնջ քարոզիչն է եղած խաղաղության և սիրո»¹⁵: Շատ բարձր գնահատելով ֆրանսիական մեծ ռեալիստներին,

10 Տե՛ս «Անահիտ», 1934, № 5—6, էջ 93:

11 Լ. Բաշալյան, Նորավեպեր և պատմվածքներ, Փարիզ, 1943, Ա. Զոպանյանի առաջաբանը, էջ 10:

12 Տե՛ս «Հայրենիք», Կ. Պոլիս, 1893, հոկտեմբերի 25:

13 Նույն տեղում, 1894, գեկտեմբերի 30:

14 Նույն տեղում, 1895, օգոստոսի 30:

15 Նույն տեղում, 1894, մայիսի 5: Նկատենք, որ հետագայում Ե. Օտյանը սիրով թարգմանել է Լև Տոլստոյի «Հարություն», «Աննա Կարենինա» հանրահռչակ վեպերը, վերջինիս առաջաբանում նույնպես հաստատելով, թե «Թոլսթոյ՝ Ռուսիո փառքն ու պարծանքը, ապահովարար ժամանակակից և ամեն ժամանակներու հանճարներն մեկն է»: Ե. Օտյանը թարգմանել է նաև

ինչպես նաև առաջադիմական ուսման տիրույթի ներկայացուցիչներին, հայ «հանձարեղ պատանի» Պետրոս Դուրյանին¹⁶, մեծանուն վիպասան Րաֆֆուն¹⁷, «հայ առաջին զվարթագիր երգիծաբան» Հ. Պարոնյանին (հատ. 4, էջ 14), իր ժամանակակից լավագույն գրողներին, Ն. Օտյանը կարծում էր, որ «միայն աղեկ գրված գիրքերը չեն, որ կմնան, այլ մանավանդ անոնք, որոնք ժողովրդի սրտին մոտիկ կխոսին»¹⁸։ Չմտնելով մանրամասնությունների մեջ, ավելացնենք նաև, որ Ն. Օտյանը գրողներին ներկայացնում էր ոչ միայն ժողովրդի հոգուն ու սրտին մոտ ազատասիրական, հայրենասիրական, հումանիստական ազնիվ գաղափարները բարձր արվեստով արտահայտելու պահանջը, այլև կենսականորեն կարևոր էր համարում գրողի սկզբունքայնությունը։ «Գրողներ, որոնք ոչ կարծիք ունեն, ոչ ուղղություն, որոնք օր մը ասոր, օր մը անոր թմբուկը կզարնեն փշած հովին համեմատ,— գրել է նա,— ահա ինչ որ ամենեն ավելի պժգանք կազդե մարդուս»¹⁹։ Սկզբունքայնությունը, հավատարմությունը սեփական համոզումներին՝ նա պարտադիր հատկություն էր դիտում հատկապես երգիծաբանի համար։ 1894 թ. պատասխանելով «Հայրենիքի» հարցումին, նա գրել է, թե երգիծողը պիտի ազատ լինի «ամեն կանխակալ կարծիքներու կաշկանդումներեն», պիտի կարողանա կյանքի «ամենեն լուրջ խնդիրներու առթիվ» արտահայտել «ծանր ու նորանշան կարծիքներ և ճշմարտություններ» և պիտի ունենա «թեթև, կայծկիկոտ, սուր ու հեգնիչ ոճ», «մտածման և բացատրության այն նուրբ ու ճարտար եղանակը, որ ամբողջ գրվածքի մը մեջ կցուլա և առանց բառախաղերու... դիմելու կուտա անոր տաք աշխուժություն մը»²⁰։

Գեղագիտական հիշյալ գիրքերից էլ ահա ստեղծված են Ն. Օտյանի անդրանիկ նորավեպերը, պատմվածքները, քրոնիկները, որոնք գալիս էին հաստատելու երգիծական մի նոր վառ տաղանդի ծնունդը։ Հայ նորավիպագրության ընտիր էջերից են, օրինակ, նրա «Վաշխառուն» (1893) և «Կաղանդի վիպակը» (1895)։ Երկուսի հիմնական մոտիվներն էլ կարելի է ձևակերպել մեկական նախադասությամբ՝ «ստակը հաղթում է սերին» և «մեկը տքնում է, մյուսը՝ վայելում»։ Մոտիվներն, ինչպես տեսնում ենք, նորություն չէին։ Սակայն նոր ու թարմ էին օտյանական հեգնախառն-հումորախառն աշխույժ պատմելաձևը, սեղմ ու սուր ոճը, կերպարները բնութագրելու, մանավանդ՝ խոսեցնելու վարպետությունը։ «Վաշխառուն» իր խորքում ողբերգական պատմություն է։ Տարիքոտ, «ցած, դաժան»²¹ մի մսագուռ (Հակոբ) պարտապա-

Յ. Դոստոևսկուց («Մեռելներու տան հիշատակները» և այլն), Մ. Դորկուց («Բանտից» մի հատված՝ «Քաղաքական բանտարկյալները») և առհասարակ սիրել ու գնահատել է ռուս գրականությունն ու գրական հանճարներին։

¹⁶ Նույն տեղում, 1894, ապրիլի 24։

¹⁷ Քիչ ավելի ուշ Րաֆֆուն անդրադառնալով, Ն. Օտյանը գրել է. «Շատ քիչերը կրցած են հասնիլ Րաֆֆիի ժողովրդականության, որովհետև շատ քիչերը կրցած են անոր չափ թափանցիլ ժողովրդի հոգեբանության, խոսիլ անոր սրտին մոտիկ, հրահրել դայն», քանի որ «իր վեպերը ավելի զործնական, ավելի ռեալ ու վեհ նպատակի մեջ կձգտին», իսկ վիպասանը «հայ ստրկույթունը նկարագրած ատեն, ցույց տված է նաև դայն թոթափելու միջոցը» (տե՛ս «Շուշան», Կ. Պոլիս, 1913, № 8)։

¹⁸ «Հայրենիք», 1894, դեկտեմբերի 19։

¹⁹ Նույն տեղում։

²⁰ Նույն տեղում, մայիսի 22։

²¹ Ն. Օտյանի արդեն նշված վեցհատորյակում տեղ գտած գեղարվեստական ստեղծագործություններից մեջերումների էջերը չենք նշում։

նին ստիպում է իրեն կնության տալ արդեն նշանված մանկամարդ աղջկան (Զարուհի): Վաշխառուն համոզված է, որ «սերը փոր չկշտացներ», իսկ «ստակը կծածկե ամեն բան»: Աղջիկն իր հերթին գերադասում է պժգանք ազդող հարուստի փողի քսակը, քան գեղեցիկ, բայց աղքատ նշանածի սերը, դատելով, թե «սերը ամեն ատեն կրնար գտնել, եթե ուզեր, բայց ստակը՝ ոչ»: Պարզ է, թե որպիսի զույգ պիտի կազմեին նման ստակապաշտները, որոնց, մեկ այլ գործում, Օտյանը անվանում է «չափալն (ստահակ—Ս. Մ.) էրիկներ» և «էտեպսըզ (անամոթ—Ս. Մ.) կնիկներ» («Ազնվաշուքներու շուրջը»): Այլանդակ է երևույթը, բայց Ե. Օտյանը չի գիմում տխուր դույնների, մոայլ մտորումների, զգայացունց տեսարանների: Նա ծաղրում ու ծիծաղում է, շմոռանալով ընդգծել, թե «մեր ծիծաղը դառն բան մը կպարունակե» (հատ. 1, էջ 533): Իրոք դառն, «վշտի ծիծաղն» ենք տեսնում նաև «Կաղանդի վիպակում»: Նոր տարվա առթիվ ունևորները շաբաթներ շարունակ բարիքներ են կրում տուն: Մինչդեռ բարիքներ ստեղծող աշխատավորը մի բուռն մրգեղեն անգամ չի կարողանում նվիրել միակ երեխային: Տխուր պատմություն է: Բայց դարձյալ չկան մոայլ գույներ, կարծեք կատակով է հյուսված մանավանդ վերջը: Նվերների փոխարեն հայրը երեխային հրամցնում է «Աղքատ Ղազարոսի հեքիաթը», ըստորի աստված արդար է, քանզի այս կյանքում ճոխ ապրող հարուստները այն կյանքում պիտի այրվեն դժոխքի կրակներում, իսկ աղքատները մահից հետո պիտի դրախտում վայելեն արքայության բարիքները... Ու հետևում է մանկանը հատուկ անմիջական հարցումը. «Արդար ըլլալու տեղ թող բարի ըլլար,— ըսավ Պողոսիկ,— թող ամեն մարդ կաղանդին պտուղ ունենար հոս ու անդի աշխարհքն ալ ամեն մարդ արքայություն երթար, ավելի աղեկ չէ՞ր ըլլա...»:

Նուրբ ու դիպուկ այս հանդիմանանքը ուղղված է ոչ միայն, ավելի շուտ ոչ այնքան, կրոնական առասպելների և աստծու հասցեին, որքան ամբողջ սեփականատիրական, բուրժուական աշխարհին, որը լի էր սոցիալական հակասություններով ու շարիքներով, հասարակական խոցերով, բարոյական արատներով, անարդար օրենքներով: Հենց այդ երևույթների մերկացման տեսակետից էլ աչքի են ընկնում օտյանական քրոնիկները, որոնցից յուրաքանչյուրը մի այրող ապտակ է «մարդը մարդուն գայլ» դաժան սկզբունքով ղեկավարվող հասարակության դեմքին: Տարբեր կեղծանուններով («Ս. Ժիրայր», «Երոտ», «Ե. Օ.», հետո նաև՝ «Վահրամ») տպագրված նրա քրոնիկները («Բերայի մեջ», «Օր-օրին», «Շաբաթական քրոնիկ» և ուրիշ շարքերը) մեծ մասամբ ֆեւիետոններ են, ունեն իրական հիմք, ժամանակի շունչ և երգիծական լիցք. Ե. Օտյանի մասին Վ. Թեքեյանը իրավամբ դրել է, թե «Քրոնիկը մանավանդ իրմե ավելի մեծ վարպետ մը շունեցավ մեր մեջ»²²:

Սեղմ, սրամիտ, անվրեպ են օտյանական լավագույն քրոնիկները, որոնք իրենց սուր ծայրով ուղղված են կեղծիքի, խաբեբայության, փողի պաշտամունքի, «փտած գաղափարների» ջատագով աշխարհիկ և հոգևորական պաշտոնյաների, անազնիվ «ազնվաշուքների» ու «էֆենդիների» դեմ, արարածներ, որ Ե. Օտյանի խորին համոզմամբ՝ «ամենքն ալ մեկ հորի ջուր են»²³: Իզուր չէ,

²² Տե՛ս Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1928, էջ 457: Նույն տեղում ինքը՝ Թեոդիկը գրել է. «Որպես զվարթախոհ քրոնիկագիր՝ նմանդ շունեցար» (էջ 470):

²³ «Հայրենիք», 1893, նոյեմբերի 8:

որ քրոնիկագիրն, իրոք, «մեծ իրարանցում պատճառեց... կատարյալ փոթորիկ մը հարուց մասնավորաբար Բերայի բարձր գասին մեջ» (հատ. 4, էջ 25):

Երվանդ Օտյանը և՛ իբրև գրադատ, նորավիպագիր ու քրոնիկագիր, և՛ իբրև լրագրող ու հրապարակագիր ծառայում էր ազգային մշակույթի զարգացմանը, հարազատ ժողովրդի կենսական շահերին: Նա ծառանում էր հնի, հետամնացի, հետադիմականի, օսմանյան կայսրության արյունոտ քաղաքականության դեմ: Նա լուրջ հեղինակություն և անուն էր վաստակել որպես հայրենասեր, առաջադեմ, սկզբունքային գործիչ: Եվ երբ հայկական ջարդեր սկսվեցին նաև Կ. Պոլսում, նա ևս հարկադրված էր 1896 թ. օգոստոսին թաքուն հեռանալ ծննդավայրից:

Գրիչի փոխարեն ճարահատյալ ձեռքն առնելով պանդուխտի ցուպը, Ե. Օտյանը տարիներ շարունակ թափառեց: Հունաստանում նա ականատես եղավ տարագիր հայերի սովալլուկ գոյավիճակին: Եգիպտոսում մոտ երկու տարի հաշվակալ-գանձապահի պաշտոն վարեց խուլ ու ամայի Շարապաս գյուղում: Փարիզում տարիուկես ծառայեց որպես Ա. Գալֆայանի, այդ ինքնակոչ «իշխան» Գվիդոն Լուսինյանի և որոշ ժամանակ էլ՝ Վիեննայում ապրող ռումինահայ «ցնորական բառարանագիր» (հատ. 4, էջ 157) Ա. Յանեսքուի քարտուղարը: Մի քանի ամիս ապրեց Լոնդոնում, համարյա մի տարի Հնդկաստանում (1904 թ.): Ալեքսանդրիայում (Եգիպտոս) ներից հաշվակալ դարձավ մի ձուլարանում: 1896—1908 թթ. օտյանական այդ օդիսականի մասին է «Տասներկու տարի Պոլսեն դուրս» գիրքը, որը միաժամանակ հիշյալ թվականների գաղութահայության կյանքի հավաստի ու փաստալից տարեգրությունն է: Մեր հուշագրական գրականության այդ ամենափայլուն էջերից մեկի գրեթե բոլոր հատվածները գեղարվեստական հնչեղություն ունեն, շատերն էլ պարզապես նորավեպ են, պատմվածք, ֆելիետոն («Բարի դահիճը», «Ծիծաղելիության ասպետները», «Հաշիշը և հաշիշամուկները» և այլն):

Պանդուխտի աստանդական անապահով կյանքից զատ Ե. Օտյանին «բաժին ընկավ» նաև մեր ժողովրդի ամենաողբերգական ճակատագիրը: 1915 թ. եղեռնին նա ևս ձերբակալվեց, աքսորվեց արաբական անապատները և շուրջ երեք տարի շարունակեց «ղժոխային զնացքը դեպի անծանոթ սարսափները»²⁴: Սովի, սպանդի, սոսկալի «արհավիրքների, սարսուցեցուցիչ եղեռնապատկերների» ճամբարներում մաքառեց ստույգ մահվան դեմ, միայն հրաշքով կենդանի մնաց և իսկապես կարող էր Երեմիա մարգարեի պես իր մասին ասել. «Ես այն մարդն եմ, որ Տառապանքը տեսա»²⁵: Նախ թափառումները, ապա տառապանքները, բնականորեն, կտրեցին նրան ստեղծագործական աշխատանքից և դառնացրին: Սակայն ոչ մի ուժ ի վիճակի չէր ընկճելու հայրենի գրականությանը ծառայելու նրա անսասան կամքը և անսպառ եռանդը: Ու նա սերունդներին թողեց իսկապես մի «իշխանական ժառանգություն», որը զարմանք և հիացմունք է պատճառում իր բացառիկ բալմազանության մեջ ու հարստության մեջ: Այդ ժառանգության մեջ մենք տեսնում ենք երեք տասնյակից ավելի ծավալուն, երբեմն բազմահատոր վեպեր, հարյուրավոր վիպակներ, կատակերգություններ, պատմվածքներ, նորավեպեր, բազում երգիծական դիմանկարներ, հուշագրություններ, անթիվ-անհամար լրագրական, հրապարակախոսական,

²⁴ Տե՛ս Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1921, էջ 114:

²⁵ Նույն տեղում, էջ 92:

րանասիրական, գրադատական հողվածներ, հետազոտություններ, ֆելիետոններ, պարսավագրեր, մի շարք արժեքավոր թարգմանություններ²⁶, մի քանի սյարբերականներ («Աղատ խոսք», «Կառափնատ», «Խարազան», «Մանանա», «Իգնատ աղա», «Երգիծական տարեցույց» և այլն), որոնք նմանապես օտյանական ինքնուրույն ստեղծագործություններ են: Իհարկե, քիչ չեն նաև «հավուր պատշաճի» գրված էջերը: Ե. Օտյանն ինքը խոստովանել է, թե հաճախ հարկ է եղել զբաղվելու ոչ թե արվեստագետ-նկարչի, այլ արհեստավոր-ներկարարի աշխատանքով²⁷: Սակայն նա ստեղծել է երգիծական արվեստի մի ամբողջ շարք հիշատակերտ հուշարձաններ, որոնք մտել են մեր դասական արձակի գանձարանը:

Հայ երգիծաբանությունը զարգացման նոր փուլ թևակոխեց, երբ հանդես եկան Խ. Աբովյանը, Միք. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը, Հ. Սվաճյանը, Մ. Մամուրյանը, Գ. Սունդուկյանը և մյուսները: Սակայն անժխտելի է, որ մեր երգիծական արվեստի շենքը վեր է խոյացել գերազանցորեն Հ. Պարոնյանի և Ե. Օտյանի ջանքերով: Նրանք էին կոչված հուժկու զարկ տալու երգիծանքի բոլոր ձևերի, միջոցների, հնարանքների՝ հեգնանքի, հումորի, պարսավի, զավեշտի, կոմիզմի տարատեսակների (խոսքի, դրուժյան և այլն) և երգիծական բոլոր կտավների աննախընթաց զարգացմանը՝ սկսած երկբառյա սրամտությունից մինչև կատակերգությունն ու լայնահուն երգիծավեպը:

Ե. Օտյանը գրել է մեկ ողևիլ («Զավալլըն») և մեկ կատակերգություն՝ «Ֆրանքո-թրքական պատերազմ կամ Զարշըլը Արթին աղա» (Միք. Կյուրճյանի հետ համատեղ), որն ստեղծման օրից չի իջնում հայ բեմերից: Ինչ վերաբերում է երգիծավեպին, ապա նրա գրչին են պատկանում սոցիալական երգիծանքի մեծ կտավների այնպիսի գլուխ-գործոցներ, ինչպես «Միջնորդ տեր պապան», «Ազգային բարերարը», «Ընտանիք, պատիվ, բարոյական», «Թաղականին կնիկը», «Վաճառականի մը նամակները կամ կատարյալ մարդ ըլլալու արվեստը», «Ես դրսեցի չեմ առներ» և ուրիշ վեպեր ու վիպակներ:

Տակավին 1895 թ. սկսելով շարադրել «Միջնորդ տեր պապան» (սկզբում՝ «Գործ եփող մը» խորագրով), Ե. Օտյանը մեր վիպագրության մեջ բերում էր թարմ, ինքնատիպ խոսք և նոր կերպարներ: Այդ յուրատեսակ վեպ-կատակերգության մեջ խորապես վիպական սյուժեն, գործողությունները զարգանում են ոչ թե հեղինակային պատումների ու նկարագրությունների, այլ թատերգությանը հատուկ հակիրճ բնութագրումների (ռեմարկ), կերպարների մենախոսությունների ու երկախոսությունների միջոցով: Ուրույն կառուցվածքը մեծապես նպաստել է ստեղծելու կենսական բախումներ, զավեշտական վիճակներ, ծաղրելու ընտանեկան և հասարակական կյանքի բազում արատներ և կերտելու ամուսնության միջնորդի դեր կատարող խորամանկ, խարդախ, դրամապաշտ կրոնավոր Տեր Բարսեղի կերպարը, որի նմաններին է վերաբերում «դրսից քահանա, ներսից սատանա» թևավոր խոսքը: Պոլսահայ բարբերի, կենցաղի, բարոյական նորմաների ու սոցիալական խոցերի արտացոլման տեսակետից աչքի է ընկնում նաև «Ընտանիք, պատիվ, բարոյական» վեպը:

²⁶ Արդեն հիշատակված հեղինակներից բացի (Լ. Տոլստոյ, Ֆ. Դոստոևսկի, Մ. Գորկի) Ե. Օտյանը թարգմանել է նաև էմ. Զոլա («Արգասավորություն»), Մ. Տվեն («Աղքատ և իշխան»), Պ. Պոլու («Հակոբա ջրհորը»), Է. Պոյեր («Սուտին իշխանությունը»), հանրածանոթ Նադ Պինկերտոն» և «Նիք Քարթր» դետեկտիվները և այլն:

²⁷ Ա. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 8, էջ 526:

Այստեղ ճշմարիտ արվեստով պատկերված են կեղծիքի, ստորության, քծնանքի միջոցով դրամ վաստակած և հասարակության մեջ բարձր դիրք զբաղեցրած «ազնվաշուքների» արարքները՝ մեկը մյուսից կեղտոտ, ալլանդակ ու արգահատելի։ Նման «ազնվաշուքների» տիպական ներկայացուցիչն է «բարեգործական» կամ «աղքատախնամ» կոչված ընկերության ատենապետ Ղուկաս էֆենդին, որը խոսքով ամեն ինչից վեր դասելով «ընտանիքը, պատիվը, բարոյականը», զործնականում կուսական պատիվներ է պղծում, կյանքն անցկացնում անբարոյական տներում, քայքայում նույնիսկ սեփական ընտանիքը, թշվառության մատնում անմեղ մարդկանց։ Վեպի հիմնական արժանիքներից մեկը նման «էֆենդիների» նկատմամբ ժողովրդական ղանգվածների բուռն ատելության, բողոքի ու ցասման ռեալիստական արտացոլումն է, որն ինքնին խոսում է Ե. Օտյանի դեմոկրատական հայացքների մասին։ Այս առթիվ նշենք, որ միանգամայն իրավացի է երգիծաբանը, զրևույթ, թե իր նպատակը միշտ եղել է «անհաճո ըլլալ օճառի պղսլակներն շինված համբավներու, զողությամբ պարկեշտացած ազնվաշուքներու, բողոքյամբ կուսացած պատիվներու, ունայնության վրա կառուցված արժանիքներու»։

Անհաճո ըլլալ մանավանդ իր խոզի դարձ պարարտությանը մեջ հոխորտաբար հղփացող աղտոտ մենծ աղաներու, որոնց համար նույնիսկ շատ ազնիվ, շատ բարձր, շատ մաքուր ղենք մը կհամարեմ զրիչը և զորոնք պիտի ուղեի հալածել աղբանոցի... ցախավելով մը» (հատ. 1, էջ 564)։

Սա հեղինակի նպատակադրումների, նաև կատարած աշխատանքի հակիրճ ու ճշմարտացի բնութագիրն է, որը հաստատվում է նրա վերոհիշյալ վեպերով և մյուս ստեղծագործություններով։ Զխոսելով բոլորի մասին, կուղենայինք առանձնացնել նաև «Վաճառականի մը նամակները», որի կենտրոնական դեմքը՝ Գոզմա Դամիրանոսյանը, բուրժուական բարոյախոսի և գաղափարախոսի լիովին անհատականացված տիպական կերպար է։ Այսպանքի ու հեգնանքի հմուտ վարպետի զրչով հյուսված նրա նամակները պարունակում են «կատարյալ մարդ ըլլալու արվեստի» մասին «խրատներ ու խորհուրդներ», որոնք կարծես սեղմ ու դիպուկ առածներ ու ասացվածքներ լինեն։ Ահա դրանցից մի երկուսը. «Առաջ անձդ, ետքը ուրիշները»։ «Մարդուս առաջին և մեծագույն իղևալը իր փորը կշտացնելն է»։ «Ամեն մարդու համար իր բուն հայրենիքը փորն է»։ «Դրամ չհսկու համար, իհարկե, ամեն միջոց լավ է, բայց պայմանով, որ խաղք չըլլանք»։ «Համոզումներն ու կարծիքները հագուստի կնիմանին և եղանակին համեմատ պիտի որ փոխվին»։

Ե. Օտյանի սոցիալական երգիծավեպերը, փոքր ու մեծ կտավի մյուս արձակ էջերը («Համբարձում աղա», «Վրեժ», «Բարի դահիճը», «Գործի մարդիկ», «Անիծյալ տարիներ», «Նոր հարուստներ» և այլն) ժամանակի կյանքի, մասնավորաբար պոլսահայ իրականության զրևթե բոլոր հիմնական կողմերի գեղարվեստական պատմությունն են։ Հանդես գալով իբրև տիպականացման արվեստի վարպետ, նա նշանավորեց քննադատական ռեալիզմի արևմտահայ վիպագրության բարձրակետը։ Նա կյանքի կոչեց նաև պատմա-իրական, վավերական հիմք ունեցող մի շարք գետեկտիվ-արկածային վեպեր։ Ընդսմին՝ դրանցից առնվազն երեքը՝ «Ապոյուլ Համիտ և Շերլոք Հոլմս», «Մալիհա հանրմ կամ բանակը բռնավորին դեմ», «Թիվ 17 խաֆիեն» անմրցելի են մեղանում՝ ժանրին հատուկ հետաքրքրաշարժ, սլացիկ սյուժեներով և քաղաքական նպատակասլացությամբ։

Ե. Օտյանը կոչված էր նոր խոսք ասելու, նոր ակոս բացելու հատկապես մեր քաղաքական երգիծանքի մարզում: Նա ստեղծագործեց տենգահույզ մի ժամանակաշրջանում, որը հագեցված էր քաղաքական ցնցումներով, ազգային-աղատագրական և հեղափոխական շարժումներով, տարբեր հասարակական հոսանքների ու կուսակցությունների բուռն բախումներով: Նրա աչքի առաջ տեղի ունեցան ռուսական հարցի» արյունոտ «լուծումը», ռուսական երեք աշխարհացունց հեղափոխությունները, առաջին իմպերիալիստական արյունահեղ պատերազմը և ապրիլյան ցեղասպանությունը, մեծ Հոկտեմբերի պատմական հաղթանակը և գոյության համար օրհասական անհավասար գոտեմարտ մղող հայ ժողովրդի ազգային վերածնունդը: Ու նա անդրադարձավ բոլոր այդ իրադարձություններին: Իհարկե, որոշ սահմանափակություն և առանձին հակասություններ կարելի է նկատել նրա հայացքներում: Սակայն նշանակալիցը սկզբունքային այն պայքարն է, որ երգիծանքի ղեկավարն առաջ էր սոցիալ-քաղաքական կյանքում իր նկատած «ստության, կեղծիքի, շահագործության, խաբեբայության դեմ» (հատ. 4, էջ 685): Զեկերպելով իր գրական-քաղաքական դավանանքը, նա գրել է. «Մենք մեր գոհացումը պիտի փնտրենք ծաղրելով կամ ձաղկելով, մեր օրվան տրամադրությանը համեմատ, կեղծ փրկիչները, սուտին ճարտարապետները, գողցված համբավները, անշարժ պողտողները, հաշվող խանդավառները, անկեղծության աճալարարները, հայրենասիրության ձեռնադրուները...» (հատ. 1, էջ 553—554): Ու այդպես էլ վարվում էր: Դրա առաջին ցայտուն ապացույցը «Հեղափոխության մակաբույծները» փայլուն պատմվածքների շարքն է (1897—1899): Ինչպես պարզ երևում է Ե. Օտյանի հուշագրություններից («Տասներկու տարի Պոլսեն դուրս») և ժամանակակիցների ու հետագա բանասերների (Հ. Զ. Սիրունի, Ա. Մակարյան և ուրիշներ) վկայություններից, երգիծաբանը, նկատի ունենալով իրական դեպքեր ու կենդանի դեմքեր, հանձինս ժամանակի կուսակցական-քաղաքական գործիչների, ծաղրել ու ձաղկել է «մեր մեջ հեղափոխական շարժումեն ծնած» («Արտասահմանյան գործիչը») այն արկածախնդիր, մայաբույծ, դրամաշորթ տարրերին, որոնք ձևանալով «հեղափոխական», «հայրենասեր», «ազգային հերոս», իրականում արատավորում էին հեղափոխության, ազգային ազատության, հայրենասիրության սուրբ գաղափարները: Դրանցից մեկը ներկայանում է իբրև «մեր անդրանիկ հերոսներեն», շրջում է հայ գաղութներում, որպեսզի հանձին իրեն «ժողովուրդը... տեսնե իր հերոսները և քաջալերվի»: Մինչդեռ հիասթափություն ու արգահատանք է առաջ բերում ոչ միայն ներքին դատարկությամբ, ապուշության հասնող անհամապաշտոն, ինքնամեծար ճառերով, այլև արտաքին տեսքով, որը գծված է երգիծական դիմանկարի մեծանուն վարպետ Պարոնյանի հմտությամբ. «Լայն ու երկայն ցցված ականջներով, խոշոր քիթով, հերկեն դարձող հոգնած եզր տարտամ նայվածքով, գլխուն զարկած մեկը» («Որ մենք հերոս...»): Մեկ ուրիշը՝ «տիրադուր, հացկատակի, սպասավորի ու վարժապետի վարնոց խառնուրդ մը», քամելեռնի նման խորհում ու գործում է մի «սկզբունքով», ըստ որի՝ «ամեն բանի ժամանակ կա՝ հեղափոխական ըլլալու ժամանակ և հակահեղափոխական ըլլալու ժամանակ, սողալու ժամանակ և խայթելու ժամանակ. ստակ մուրալու ժամանակ և ստակը պանքան դնելու ժամանակ...» («Հակահեղափոխականը»): Եվ այդպես են բոլոր մյուս մակաբույծները, որոնց դիմակաղերծելով, երգիծաբանն, իրոք, օգնում էր ժամանակակիցներին՝ «զանա-

զանելու ճշմարիտը կեղծեն», «հարազատ հերոսը՝ անվավերեն» («Անվավեր հերոսներ»):

«Հեղափոխության մակարոյծները» բնավ չի կորցրել ոչ միայն իր ճանաչողական արժեքը, այլև քաղաքական հնչեղությունը և զեղարվեստական հաճույք պատճառելու ուժը: Այդպես են նաև քաղաքական երգիծանքի օտյանական մյուս կոթողները՝ «Պրոպագանդիստը» և «Լնկեր Բ. Փանջունի» երգիծավեպերը, «Պատերազմ և խաղաղություն», «Ճուղուպրիսթ և ընկ.» լիպակները, «Մեր երեսփոխանները» երգիծական դիմանկարների շարքը, մեծաթիվ քաղաքական ֆելիետոնները, պարսավագրերը, ծանակագրերը, երգիծական նամականիները (սկզբում բացատրություն մը), տարեցույցները և այլն:

«Պրոպագանդիստը» (1901) հայ քաղաքական երգիծավեպի առաջնեկն է. որը թեև մնացել է անավարտ, բայց հեղինակին հաջողվել է ստեղծել ըստ ամենայնի ավարտուն կերպարներ: Այդպես են իրենց խոսուն ազգանուններին միանգամայն համապատասխան խորհող ու գործող Կուլտամյանցը, Բնծելտուրյանցը և նրանց գործակիցները՝ սահմանափակ մի վարժապետ, մտախաթար մի կառավարիչ, «կեղծավոր, երկդիմի, շահասեր ու շահամոլ» մի խանութպան, դատարկապորտ մի երիտասարդ, արկածամոլ մի պատանի, մի «խմբապետ», որը «եթե «հեղափոխական» չըլլար, հավանական է, որ կամ ղրամանենգ կամ մաքսախույս պիտի ըլլար»: Դրանք «հեղափոխականներ» են, որոնց «հեղափոխության շահագործումը կհրապուրեն»: Ինծելտուրյանցի «իմաստասիրական տեսության» համաձայն «աշխարհքումս մարդը մի միկրոկողմա է», որի անձնական բարօրությանը, բարգավաճմանը ծառայելու են կոչված «հայրենասիրությունը և հեղափոխությունը»: Կուլտամյանցի համոզմամբ՝ «միկրոկողման ղորացնել, ազատ, անկախ, բարգավաճ վիճակի մը հասցնել» — ահա փրկությունը, ապա բուն հեղափոխությունը: Եվ երգիծական փայլուն արվեստով Ե. Օտյանը ցույց է տալիս, թե ինչպես «հայրենիքի փրկություն» գործին «զինվորագրված», «մահ կամ ազատություն» նշանաբանը սերտած Կուլտամյանցները կուլ են տալիս սուրբ նպատակների համար ժողովրդի նվիրած զրամները, պատուհաս են դռնում նույն ժողովրդի համար, ստեղծում հալածանք ու կոտորած և փրկում միայն իրենց կաշին:

«Հեղափոխական» և «ազգի փրկիչ» ձևացող, իրականում, սակայն, «պարսպապես էտեպսըդ խաչագող» («Ճուղուպրիսթ և ընկ.») ստահակների դեմ են ուղղված Ե. Օտյանի քաղաքական երգիծանքի սուր սլաքները: Ինչ վերաբերում է նրա «Լնկեր Բ. Փանջունի» եռամաս երգիծավեպին, ապա այն արդիական մի առանձին նշանակություն ու հնչեղություն ունի: Երգիծավեպի կենտրոնական դեմքը՝ Փանջունին հայ և համաշխարհային երգիծական գրականության լզակիրներն հաջող տիպերից մեկն է, որը «ցեղահպատակ հարազատ գիծեր ունենալով հանդերձ, իր շատ մը կողմերով կպատկանի մարդկային մեծ ընտանիքին» — ինչ որ իրավունք կուտա իրեն մտնելու հուշակավոր կերպարներու տիեզերահուշակ պատկերասրահին մեջ...»²⁸:

Հատկանշական է, որ խոսելով Մոլիերի մասին, նրա կերտած կերպարներից Հարրադոնին, Տարտյուֆին համարելով «նույնքան հայ, որքան ֆրանսացի», Ե. Օտյանը գրել է. «Բոլոր այն տիպարները, որոնք այդ մեծ հանճարը

²⁸ Ե. Օտյան, Լնկեր Բ. Փանջունի..., Կահիրե, 1938, Միք. Կյուրճյանի ներածությունը, էջ 2: Մեջբերումները այսուհետև հիշյալ գրքից են:

ցուցադրած է իրենց թերություններով ու ծիծաղելիություններով, համամարդկային են և ամենուն կվերաբերին»²⁹։ Ճիշտ նման տիպար է նաև Փանջունին։ Հայտնի է, որ Սերվանտեսը, Մոլիերը, Զ. Սվիֆտը, Սալտիկով-Շչեդրինը, Ա. Դոդեն, Մ. Տվենը և երգիծական արվեստի մյուս հանճարները, օրինակ, իսպանական, ֆրանսիական, անգլիական կյանքից առնված թեմաներով հրաշակերտել են այնպիսի համամարդկային երևույթներ, ինչպես դոնքիշոտությունը, տարտյուֆականությունը, եհուականությունը, տարտարենությունը և այլն։ Իր վեպի նյութը քաղելով հայկական իրականությունից, հայ աղգալին կուսակցությունների, հատկապես «հեղափոխական» դաշնակցության գործունեությունից, որի մասին անժխտելի փաստեր կան գրքում, Ե. Օտյանը արարչագործել է փանջունիականությունը, որը նմանապես համամարդկային երեվույթ է։ Փանջունին անցյալ և մեր ժամանակներում առկա քաղաքական դեմագոգի, դոգմատիկի, թերուս իմաստակ ֆրադաբանի և ինքնապաշտ փառամոլի հավաքական գծերը մարմնավորող գեղարվեստական տիպ է։ Նրա ամենաբնորոշ հատկությունը խոսքի և գործի աղաղակող ու աղետաբեր հակասությունն է, որը տեսնում ենք երգիծական անկրկնելի արվեստով հյուսված ծապլվարյան և վասպուրականյան նամակներում, «դասախոսություններում», տարագրության մեջ նրա արկածներին նվիրված հատվածներում։ Ինքզինքը հորջորջելով «հեղափոխական», «ընկերավար» («սոցիալիստ»), իր «միսիան» համարելով ծառայել «ազգային վերածնության գործին», վարել «շինարար և փրկագործ պաշտոն», «վերականգնել կործանված հայրենիքը», Փանջունին կործանում է շեն գյուղեր, քանդում է կրթության օջախներ, ամենուր բերում է փորձանք, կողոպուտ, աղետ, ողբերգություն։ Ու միշտ մնում է նույն անուղղելի պարծենկոտ պոռոտախոսը, միշտ իր գործած շարիքները դիտում է բարիքներ, որոնց մասին հիմար հպարտությամբ հոխորտում է։ Մեծ վայելում եմ քանդումի հեշտանքը, իմ հաջորդը թող կրե վերաշինության տաժանքը»։

«Ընկեր Բ. Փանջունի» երգիծավեպը ոմանք մեկնաբանել են քաղաքական որոշակի միտումներով և միանգամայն սխալ դիրքերից։ Սակայն այն եղել է և մնում է իբրև սոցիալիզմի, մարքսիզմի, հեղափոխության սուրբ գաղափարներն աղավաղող և թշնամական ուժերի դեմ ուղղված սպանիչ ծաղր։ Մեր բոլոր առաջադեմ, մեծ գրողներն անխտիր շատ բարձր են գնահատել «Օտյանի հրաշակերտը, որը վաղուց արդեն դասական գործ մը դարձած է»³⁰։ Հովհ. Թումանյանը այդ դիրքը «շատ էր հավանում և կարդում էր մեծ հաճությամբ»³¹, Ա. Շիրվանզադեի խորին համոզմամբ՝ Օտյանի «անվան անմահացման համար» բավական է միայն «Ծապլվարը»³², իսկ Լ. Բաշալյանը իրավամբ գրել է. «Փանջունին Դարդարենին պես տիեզերահռչակ տիպար մը պիտի ըլլար անտարակույս, եթե Օտյան ֆրանսացի ծնված ըլլար»³³։

Հայ երգիծական գրականության մեջ առաջնակարգ տեղ ունեն նաև Ե. Օտյանի «Մեր երեսփոխանները» երգիծական դիմանկարները, որոնք գծված են

²⁹ Տե՛ս «Վերջին լուր», Կ. Պոլիս, 1920, հունվարի 30։

³⁰ «Անահիտ», 1938, № 1—3, էջ 110։

³¹ Ն վ ա Ր Դ Թ ու մ ա ն յ ա ն, Հուլիս և դեկտեմբեր, 1969, էջ 70։ Հովհ. Թումանյանը անձամբ ծանոթացել և մտերմացել է Ե. Օտյանի հետ 1921 թ. Կ. Պոլսում. նրանք միևեկ վերջ մնացին չերմ բարեկամներ։

³² Ա. Շիրվանզադեի, Երկերի ժողովածու, հատ. 9, էջ 204։

³³ Տե՛ս Թ ե ո գ ի կ, Ամենուն տարեցույցը, 1928, էջ 455—456։

«Ազգային ջոջերի» անմահ հեղինակ Պարոնյանի վարպետությամբ և օտյանական ինքնատիպ ոճով ու ոգով: Ամեն դիմանկար, ուրույն բնավորություն լինելով հանդերձ, ներկայացնում է քաղաքական որևէ հոսանքի կամ կուսակցության բնորոշ ներկայացուցչի (դաշնակցական Ա. Վոսադյան, հնչակյան Հմ. Արամյանց, ռամկավար Ա. Ալպոյաճյան, գրողներ Գ. Զոհրապ, Մշեցի Գեղամ, Օ. Զիֆթե-Սարաֆ և այլն), և յուրաքանչյուրը բնութագրման համար գտնված են յուրուրի նրբերանգներ ու հնչերանգներ:

Անհնար է, իհարկե, մեկ հոգվածի սահմաններում անդրադառնալ Ե. Օտյանի ոչ միայն բոլոր, այլև շատ թե քիչ արժեքավոր ստեղծագործություններին: Հավաստելով, թե «Երվանդ Օտյանը մի գրող է ևսլրական իմաստով», Ա. Շիրվանզադեն, որը քաջ դիտեր խոսքի արժեքը, առանձնապես բարձր է գնահատել օտյանական «ոճի զարմանալի պարզությունը»³⁴: Օտյանի «վճիտ ուճը», «պատմելու և խոսեցնելու ճարտարությունը»³⁵ հիացմունք է պատճառել մեր բոլոր գրողներին, բանասերներին: Ընդհանուրի կարծիքն է ամփոփված Ա. Արփիարյանի հետևյալ տողերում. «Պատկերահան մը, որուն ձեռքին վրձին մը կա. արվեստագետ մըն է, որ գիտե, թե ամեն մեկի դեմքի որ գիծերը պետք է ստվերի մեջ ձգձգել, որը երևան հանել. որը խոշորացնելու է, որը պզտիկցնելու»³⁶:

Ե. Օտյանը երգիծաբան էր, ուստի, բնականորեն, բացահայտում ու խաբանում էր շարք, արատավորը, թերին, տղեղը: Սակայն «նրա հոգեկան հաբասություններն էին՝ բարությունը, մարդասիրությունը և սերը դեպի գեղեցիկը»³⁷, որոնց համար և մաքառում էր երգիծանքի զենքով: Ահա թե ինչու նրա և՛ գեղարվեստական ստեղծագործությունները, և՛ ֆելիետոններն ու հրապարակախոսությունը ուղղված են ընդդեմ ամեն տեսակ ճնշման, բռնության, անարդարության: Իբրև ֆելիետոնիստ, նա ծաղրել ու ձաղկել է սուլթանին ու ցարին («Նորհրդավոր ծրարը և երեք քաջազուններ»), իմպերիալիստական տերությունների նենգ դիվանագիտությունը («Երգիծական տարեցույց»-ներ և այլն), հայ հետադիմական հոսանքների, ազգային կուսակցությունների, մասնավորապես դաշնակցության քաղաքական-կազմակերպչական պայքարի արկածախնդրական, արատավոր ձևերն ու մեթոդները («Համահավասար ղոհողություն», «Բաց նամակ մեր հույն հայրենակիցներուն», «Վերնատունեն» շարքը և այլն), երիտթուրքերին («Թանին»-ի խելքը զուխը կուգա հետզհետ»)։

Ե. Օտյանը առաջավոր մտածող էր, ազնիվ հայրենասեր և հումանիստ, ազգերի ազատության և համերաշխության դրոշակակիր: Հայ մտքի ու մշակույթի բոլոր մեծերի նման նա ևս հայությունը փրկությունը տեսնում էր ողու մեծ ժողովրդի ազատագրական-հեղափոխական պայքարի հաղթանակի մեջ: Ռուսական առաջին հեղափոխության սկզբին, 1905 թ. հունվարին, յուրովի կրկնելով Միք. Նալբանդյանի հանրահայտ միտքը, նա գրել է. «Այն օրն, որ ռուս ժողովուրդը խորտակե իր շղթաները, հայությունն ալ նոր վերածնությամբ մը պիտի ոգևորի: Մաղթենք, որ հառաջիկա տարին տեսնե մեր այս հույսերու իրագործումը»³⁸:

34 Ա. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 9, էջ 204 և հատ. 8, էջ 518:

35 Տե՛ս Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1928, էջ 456:

36 «Նոր կյանք», 1900, № 19, էջ 297:

37 Ա. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 8, էջ 525:

38 Տե՛ս «Ազատ բեմ», Կահիրե, 1905, հունվարի 14:

Հուլիսին իրականացան 1920 թ. նոյեմբերին, Հայաստանում սովետական կարգերի հաստատմամբ: Եվ Օտյանը սրտանց ողջունեց պատմական այդ իրադարձությունը ու մինչև կյանքի վերջը մնաց սովետական հայրենիքի, վերածնված մեր ժողովրդի անկեղծ բարեկամը:

Երվանդ Օտյանը վախճանվեց 1926 թ. հոկտեմբերի 3-ին, Կահիրեում և թաղվեց Մարմինայի գերեզմանատանը: Իր ողջ գիտակցական կյանքը Երվանդ Օտյանը առանց մնացորդի նվիրաբերեց հայրենի գրականությանը, մամուլին ու մշակույթին, իր հաբուստ ժառանգությամբ լուսավոր հետք թողնելով մեր արձակի մեջ ու բարի հիշատակ՝ սերունդների սրտում:

КРУПНЫЙ АРМЯНСКИЙ ПИСАТЕЛЬ-САТИРИК

(К 100-летию со дня рождения Е. Отяна)

С. А. МАНУКЯН

(Р е з ю м е)

Ерванд Отян (1869—1926)—«крупнейший армянский сатирик, рожденный для смеха» (Ширванзаде), является плодовитым романистом, новеллистом, комедиографом, фельетонистом, критиком, мемуаристом и переводчиком. Его литературное наследие удивительно богато и разнообразно.

Оригинальный мастер всех форм, родов и видов смеха (сарказм, ирония, комизм, юмор и пр.), Е. Отян создал шедевры армянского сатирического искусства, вошедшие в золотой фонд нашей литературы.

В статье рассматриваются некоторые из его произведений («Паразиты революции», «Поп-посредник», «Семья, честь, нравственность», «Письма одного купца» и др.), сатира которых направлена на разоблачение пороков буржуазного мира, а в политическом сатирическом романе «Товарищ Б. Панчунн» — едко и метко осмеяны политические авантюристы, демагоги, догматики, фразеры всех мастей и оттенков.

Будучи писателем-патриотом, гуманистом, поборником свободы и дружбы народов, Е. Отян сердечно приветствовал установление Советской власти в Армении и до конца жизни (он скончался в Каире) был ее истинным другом.